ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌԱՖԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԽԱՉԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԵՐԱԼԴԻԿ ՍԻՄՎՈԼԻԿԱՅՈՒՄ

Քրիստոնեության պաշտոնապես ընդունումից անմիջապես հետո պետական և տոհմական-նախարարական սիմվոլիկայի մեջ մտավ նոր գաղափարախոսության նշանը՝ խաչը: Այն փոխարինեց անտիկ շրջանի խորհրդանիշ կենաց ծառին:

Խաչը իր հաստատուն տեղը գրավեց ոչ միայն պաշտամունքային կառույցներում, այլև արվեստի փոքր ձևերում՝ մեմորիալ կոթողներում, առանձին հուշարձաններում, դամբարաններում և այլուր:

Մեմորիալ կոթողների (ստելաների) և առանձին այուների ֆունկցիոնալ նշանակությունը բավական լայն է: Նրանք դրվում էին տարբեր առիթներով՝ քրիստոնեության հաղթանակի, հերոսների կամ նահատակների հիշատակին և այլն:

Պատմական մեծ արժեք են ներկայացնում հատկապես այն հուշարձանները, որոնք կառուցվել են նոր կրոնի ընդունումից անմիջապես հետո: Դրանցից են Աղցի արքայական դամբարանը և Էջմիածնի Մայր տաճարը: Երևան են գալիս նաև քանդակազարդ ճարտարապետական փոքր ձևեր, որոնց քանդակներում պատկերվում են Գրիգոր Լուսավորիչն ու Տրդատ թագավորը: Փոքր ձևերի՝ մեմորիալ հուշարձանների հնագույն օրինակներից մեկն է Քասաղի կոթողը (Պատմ. Նիգ գավառ, այժմ՝ Ապարան): Կոթողից պահպանվել է միայն քանդակազարդ պատվանդանը: Քանդակի կենտրոնում պատկերված է հավասարակողմ խաչ շրջանակի մեջ, խաչի երկու կողմից մարդկային ֆիգուրներ են՝ մեկը հոգևորականի երկար զգեստով, գլխավերևում ունի լուսապսակ և ներկայացնում է Գրիգոր Լուսավորչին: Մյուս ֆիգուրը չունի լուսապսակ, նրա գոտուց կախված է սուր և նույն կերպ ներկայացնում է Տրդատ թագավորին: Երկուսի ձեռքերը ուղղված են դեպի խաչը և պահում են օղակը (նկար 1): Այս քանդակը նվիրված է Գրիգոր Լուսավորչին և առաջին քրիստոնյա թագավոր Տրդատին[1]:

Նկար 1

Օղակի մեջ տեղադրված հավասարակողմ խաչ կա նաև Աղցի Արշակունյաց արքայական դամբարանում (ներկայիս Աշտարակ բնակավայրից ոչ հեռու) (նկար 2):

Նկար 2

Սույն հորինվածքի զարգացման երկրորդ փուլը կարճ ժամանակից գտել է իր լուծումը Մայր տաճարի բարձրաքանդակում:

Տաճարի հյուսիսային ճակատին, կառուցումից ոչ շատ ժամանակ անց, տեղադրվել են երկու քանդակներ, մեկը Ս. Թեկղի կույսին և Պողոս Առաքյալին նվիրված, մյուսը ներկայացնում է բազմանդամ հորինվածք՝ ուղղանկյուն շրջանակ, որի ներսում տեղադրված են օղակ խաչով և թռչուններ: Վերջիններն օղակի եզրագծի արտաքին կողմից են, իսկ խաչը դրված է օղակի ներսում: Քանդակն ունի հունարեն արձանագրություններ (նկար 3 և 3ա):

Նկար 3

Որքան մեզ հայտնի է, այս քանդակին, այն էլ շատ թռուցիկ, առաջինը անդրադարձել է հայր Ղևոնդ Ալիշանը[2], արձանագրությունները թարգմանելով հայերեն, երկրորդը՝ ավստրիացի արվեստագետ Ցոզեֆ Ստրժիգովսկին: Անդրադարձել է նաև Մխիթարյան հայրերից Վարդան Հացունին՝ օգտվելով Ց. Ստրժիգովսկու աշխատությունից[3]:

Նկար 3ա

Մայր տաճարի քանդակների ճիշտ թվագրումը շատ կարևոր է ինչպես հայկական վաղմիջնադարյան քանդակագործության ուսումնասիրման, այնպես էլ մեզ զբաղեցնող հարցի քննության համար:

Քանդակի հորինվածքը և արձանագրություններն առավել հանգամանալից ուսումնասիրել է Ց. Ստրժիգովսկին: Նրա կարծիքով օղակի մեջ դրված խաչը Քրիստոսի մենագիրն է (crux monogrammatica), իսկ գրություններն աղոթքներ են: Խաչի հորիզոնական թևերի վրա և տակը նույնպես կան գրություններ: Վերևի տողում գրված է՝ «Ցիսուս, Աստուծոյ որդի», ներքևի տողում հիշատակվում է «Զիբիոդ» անունը, որը համընկնում է Զվիթ քահանայի անվան հետ: Վերջինս Գրիգոր Լուսա-

վորչի գործակիցն էր և հավատի համար նահատակվեց պարսից Շապուհ արքայի կողմից:

Նրան հիշատակում են պատմիչներ Փավստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին:

Գրություններ կան նաև թռչունների (աղավնիների) տակ: Ձախից՝ «Տէր, ողորմիր Արքեռսին», աջից՝ «Տէր, ողորմիր Էլպիդին»: Ստրժիգովսկին այս երկուսին համարում է ամուսնական զույգ, որոնց հիշատակին դրված է այս քանդակը: Ստրժիգովսկին քանդակի պատվիրատու համարում է այն երեք անձերին, որոնց անունները փորագրված են օղակի տակ, փոքր շրջանակի մեջ՝ Դանիհա, Տիրեր, Գարիկինիս (նկար 3ա): Ըստ Ստրժիգովսկու, Տիրերը և Գարիկինիսը (Գարեգին) հայեր են, իսկ Արքեռսը և Էլպիդը՝ հույներ: Դա վկայում է հայերի և հույների սերտ կապերի մասին[4]:

Ց. Ստրժիգովսկին այսպես է հիմնավորում իր եզրակացությունը՝ Քրիստոսի մենագիրը առաջին անգամ հանդիպում է Հռոմում 355 թ., իսկ Կոստանդնուպոլսում՝ 390 թ. Թեոդոս Մեծ կայսեր ոսկե դարպասի վրա: Հայաստանում crux monogrammatica տիպի խաչը չէր կարող լինել Հռոմից և Կոստանդնուպոլսից առաջ, ուրեմն Էջ-միածնի քանդակը պետք է թվագրել V-VI դդ.[5]:

Մայր տաճարի քանդակների թվագրության կապակցությամբ հնագետ Բ. Առաքելյանը նշում է, որ Թեկղին և Պողոսը, ինչպես նաև խաչը օղակի մեջ թռչունների հետ, տարածված մոտիվներ էին. վաղքրիստոնեական արվեստում դրանք հանդիպում են IV-V դդ., սարկոֆագների վրա և կատակոմբներում: Մայր տաճարի քանդակը աչքի է ընկնում պարզությամբ և արխայիկ ձևով, նրա համեմատությունը հայկական մյուս քանդակների հետ (մի բան, որ չի արել Ստրժիգովսկին) թույլ է տալիս այդ քանդակը թվագրել IV-V դդ.: Նրա նախատիպն է Աղցի դամբարանը, որն իր կառուցվածքով նմանվում է կատակոմբներին, իսկ դեկորատիվ ձևավորմամբ կապվում է վաղքրիստոնեական արվեստի հետ[6]: Մեր կողմից ավելացնենք, որ IV դ. թվագրումը հիմնավորվում է նաև հունարեն գրություններով, V դ. գրությունները կգրվեին հայերեն, որովհետև արդեն գոյություն ուներ հայերեն այբուբենը, ստեղծված 404-405 թթ.:

Հաջորդ դարերում Աղց-Էջմիածնի հորինվածքում տեղի է ունենում զարգացում, խաչը դուրս է բերվում օղակից և դրվում դրա վրա, իսկ օղը իր հերթին դրվում է շրջանակի վրա, որը ծառայում է որպես պատվանդան: Առաջ է գալիս եռաստիճան հորինվածք՝ խաչ-օղակ-պատվանդան: Այդպիսի կառույց ունի Բագրատունյաց պետության զինանշանը Անիում[7]:

V դ. Հայաստանի քրիստոնեական սիմվոլիկան հարստացավ նոր քանդակներով, հիմնականում եկեղեցական սյուժեներով, բայց միաժամանակ առաջացավ նոր ուղղություն՝ կտիտորական քանդակ: Դրա առաջնեկն է Տեկորի տաճարի քանդակը: Դժբախտաբար, տաճարը գտնվելով Հայաստանի հանրապետության սահմաններից դուրս, 1950-ական թթ. կեսերին քանդվել է, բայց պահպանվել է քանդակի արխիվային լուսանկարը:

Քանդակը դրված է եղել տաճարի արևմտյան ճակատի ճակտոնում, նրա հորինվածքի ձևավորման վրա ազդեցություն է թողել Մայր տաճարի քանդակի հորինվածքը:

Տեկորի քանդակն ունի երկու շերտ, որոնցից մեկը հիմնականն է: Այն ունի կտիտորական երկու քանդակներ՝ իշխան Սահակ Կամսարականի և նրա որդու, նրանց միջև տեղավորված է խաչաձև պատուհան:

Նկար 4

Հիմնական շերտից վերև երկրորդ գոտին է, որտեղ պատկերված են զույգ սիրամարգեր, որոնք կտցում են անոթի մեջ դրված խաղողի ողկույզներ (նկար 4):

Քանդակը խիստ հողմահարված է, լուսանկարի վրա մանրամասները հստակ չեն երևում, այդ պատճառով կցում ենք քանդակի գծապատկերը (նկար 4ա):

Նկար 4ա

Ճարտարապետ Ստ. Մնացականյանը գտնում է, որ այս գոտին կրկնում է Մայր տաճարի մոդելը (թռչուններ օղակի կողմերում - թռչուններ անոթի կողմերում), իսկ խաչը քիչ իջեցված է և նրա երկու կողմերից տեղադրված են դիմաքանդակները: Ստ. Մնացականյանի կարծիքով Տեկորի հարթաքանդակում արտացոլված է քրիստոնեական սիմվոլիկա՝ խաչը զույգ թռչուններով, իսկ քանդակապատկերները փոխարինել են շինարարական արձանագրությանը, որը Մայր տաճարի մոդելում տեղադրված է քանդակի հորինվածքի ներսում:

Տեկորի քանդակում շինարարական արձանագրություն չկա, այն փորագրված է առանձին, տաճարի գլխավոր մուտքի բարավորի վրա: Նրանում հիշատակվում է կառուցողը՝ իշխան Սահակ Կամսարականը[8]:

Ստ. Մնացականյանի կարծիքով Տեկորի քանդակը արձագանք է արևելյան արվեստում լայնորեն տարածված հորինվածքների, որոնց կենտրոնում տեղադրված է պաշտամունքի խորհրդանիշը, իսկ նրա երկու կողմերից՝ պաշտամունքի երկրպագուները: Ըստ էության, այդ հորինվածքը, որն ունի հնագույն ավանդույթներ, հիմք դարձավ կտիտորական քանդակների համար[9]: Ստ. Մնացականյանը ընդգծում է Տեկորի քանդակի պատմա-մշակութային մեծ արժեքը. նա գրում է, որ ամբողջ վաղքրիստոնեական արվեստում ո՛չ Սիրիայում, և ո՛չ Բյուզանդիայում V դ. կառույցները չեն ունեցել նման կտիտորական քանդակներ, իսկ Արևմուտքում կտիտորների դիմանկարները սովորաբար տեղադրվում էին տաճարների ներսում: Բյուզանդիայում կտիտորական քանդակապատկերները տարածում չեն գտել (այնտեղ կտիտորները պատկերվում էին կա՛մ խճանկարով, կա՛մ որմնանկարով), դրան հակառակ, Կովկասում և առանձնապես Հայաստանում կտիտորական քան-

դակները լայն տարածում են գտել: Հայկական և Կովկասյան շատ կտիտորական քանդակների համար նախատիպ է հանդիսացել Տեկորի քանդակը: Վերջինում, մասնավորապես հնագույն ավանդության ազդեցությամբ, քանդակապատկերները տեղադրված են ճակատային դիրքով (ֆրոնտալ) և միայն հետագա դարերում կտիտորների դիմաքանդակները դեմքով շրջվում են դեպի սրբությունը, ձեռքերը պարզում նրա կողմը և նույնիսկ նրան եկեղեցի նվիրում:

Այսպիսով, Տեկորի քանդակը անցումային ժամանակաշրջանում կապող օղակ է հնագույն արևելյան հորինվածքներից դեպի վաղքրիստոնեական կտիտորական հորինվածքները[10]:

Եկեղեցական և հերալդիկ սիմվոլիկայի զարգացման և ձևավորման ուսումնասիրության համար ոչ պակաս արժեք են ներկայացնում մեմորիալ արվեստի փոքր ձևերի քանդակները: Դրանցից մեկի մասին (քանդակ Լուսավորչի պաշտամունքի պյուժեի հետ կապված) ասվեց վերը: Այդ հարցի քննության համար առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում V դ. առանձին պյան խոյակը, որը 1972 թ. գտել է ճարտարապետ Սուրեն Մնացականյանը Եղվարդի միջնադարյան գերեզմանոցում:



Նկար 5

Խոյակի բոլոր չորս կողմերն ունեն հերալդիկ քանդակներ. դրանցից երեքում պատկերված են զույգ կենդանիներ հերալդիկ դիրքում, չորրորդում պատկերված են Դանիել մարգարեն և առյուծները[11]: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է այն քանդակը, որի վրա պատկերված են զույգ ավանակներ, իսկ նրանց միջև հավասարակողմ խաչ (նկ. 5): Դա Արշակունյաց շրջանի հայ նախարարական տներից մեկի զինանշանն է: Վաղմիջնադարյան որոշ նախարարական տներ գոյատևել են մինչև X-XI դդ. և մտել Բագրատունյաց ժամանակաշրջանի ֆեոդալական ազնվականության դասի մեջ. նրանց թվում էր նաև այն նախարարական տոհմը, որի զինանշանն էին զույգ ավանակները: Այդ նշանը նկարված է նաև Սանդղկավանքի Ավետարանի մանրանկարների հերալդիկ շարքում, որն ի հայտ է եկել XI դ. կեսերին Սանդղկավանքում, բայց ավարտվել Հաղբատում:

Հերալդիկ մանրանկարների շարքն ունի արտակարգ արժեք հայ ֆեոդալական հերալդիկայի քննության համար. նրանում ներկա են Բագրատունիների, Պահլավունիների և այլ տոհմերի նշանները, այդ թվում և զույգ ավանակները[12] (նկար 6): Ցավոք, այդ տոհմի ազգանունը ճշտել առայժմ չի հաջողվում:



Նկար 6

Հերալդիկ խաչակիր հորինվածքի զարգացման հաջորդ օրինակը տեսնում ենք պատմական Նիգ գավառում կառուցված Քասաղի բազիլիկայի քանդակներում: Բազիլիկան կառուցվել է III-IV դդ., բայց վերակառուցվել է V-VI դդ.: Բազիլիկան հետազոտող ճարտարապետ Ա. Սահինյանի կարծիքով Նիգը Արշակունի թագավորների ամառային նստավայրն էր, իսկ Բազիլիկան՝ պալատական տաճար: Տրդատ Գ թագավորը Նիգը շնորհեց Գնթունիների նախարարական տոհմին (այդ մասին կա նվիրատվական արձանագրություն)[13]: Կառույցի արևմտյան և հարավային շքամուտքերի բարավորների վրա քանդակված են հերալդիկ հորինվածքներ՝ արևմտյանում՝ զույգ եղջերուներ, կենտրոնում՝ խաչ, որը նույնպես համարվում է մենագիր: Եղջերուների թիկունքում արմավներ են. կան նաև խաղողի ողկույզներ: Հարավային շքամուտքի քանդակի կենտրոնում խաչ է, իսկ երկու կողմից գիշատիչներ են, որոնք հոշոտում են զոհին: Երկու քանդակապատկերներն էլ արխայիկ են (նկար 7 և 7ա):

Նկար 7

Նկար 7ա

Հաշվի առնելով, որ IV դ. մինչև X դ. Նիգը Գնթունիների սեփականությունն էր, կարելի է եզրակացնել, որ քանդակապատկերներից մեկը Գնթունիների զինանշանն է: Ընդ որում, հետաքրքիր է նշել, որ զոհ հոշոտող գիշատիչների հորինվածքը կրկնվում է նաև 1301 թ. կառուցված Եղվարդի եկեղեցու հերալդիկ քանդակներից մեկում:

Եղվարդի V դ. խոյակում և Քասաղի բազիլիկայում առկա է կտիտորին ներկայացնելու նոր ձևը. այստեղ կտիտորական դիմաքանդակին փոխարինում են

կտիտորների հերալդիկ նշանները: Այդ եղանակը հաջորդ դարերի կտիտորական քանդակներում դառնում է տիրապետող, չնայած VII դ. կան կտիտորական դիմանկարների հազվադեպ օրինակներ (Պեմզաշեն, Մրեն), բայց հերալդիկ խորհրդանշաններն ակնհայտորեն գերակշռում են: Կտիտորական դիմաքանդակի վերականգնումը տեղի է ունենում Բագրատունյաց շրջանում (X դ. Հաղբատ, Սանահին) և Զաքարյանների իշխանության շրջանում (XII-XIII դդ.)՝ Հառիճի Ս. Աստվածածին եկեղեցի (արևելյան Ծիրակ):

Եթե հետևենք IV-V դդ. հայկական հերալդիկ սիմվոլիկայի զարգացման ուղուն, իսկ նրա ներսում՝ հերալդիկ սիմվոլիկայի ձևավորման փուլերին, ապա կարելի է առանձնացնել հերալդիկ հորինվածքի ձևավորման մի քանի շրջաններ.

1. Արշակունիների արքայական դամբարան - վաղքրիստոնեական խորհրդանշաններ հայկական միջավայրում - խաչ թռչունների հետ օղակի մեջ:

2. Էջմիածնի Մայր Աթոռի քանդակը - օղակ թռչուններով արտաքին կողմից, առկա է քանդակի կտիտորի գրությունը: Դա երկրորդ կտիտորն է, քանի որ հիմնական կտիտորներն են Գրիգոր Լուսավորիչը կամ Տրդատ թագավորը:

3. Տեկորի կտիտորի քանդակը, որտեղ կտիտորի դիմաքանդակը փոխարինում է գրությանը, խաչը հորինվածքում գրավում է գլխավոր դիրքը:

4. Քասաղի քանդակը, որտեղ հերալդիկ խորհրդանշանը փոխարինում է կտիտորի դիմաքանդակին (V դ.): Հետագայում կտիտորական քանդակներում հերթով հանդես է գալիս նշված տարբերակներից որևէ մեկը:

Այսպիսով, վաղ միջնադարի համար կարելի է նշել քրիստոնեական հերալդիկ սիմվոլիկայի ձևավորման չորս փուլ՝ Աղց-Էջմիածին-Տեկոր-Քասաղ: Փուլերում փոխվում են հորինվածքի բաղադրիչները, բայց բոլոր դեպքերում նրանք խմբավորված են խաչի շուրջ:

Հերալդիկ հորինվածքների զարգացումը շարունակվեց նաև հետագա դարերում, և նոր հորինվածքներում խաչը ավանդաբար ներառվում է տոհմական կամ պետական սիմվոլիկայում, առանձնապես ուշագրավ է խաչի մասնակցությունը Հառիճի, Սաղմոսավանքի, Մշկավանքի, Լոռի բերդի խաչքարի հերալդիկ հորինվածքներում: Այդ նոր դրսևորումները պահանջում են առանձին քննություն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Բաբկեն Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV-VII դդ, Եր., 1949, էջ 43, նկար 13:

2 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 213:

3 Վ. Հացունի, Երդումն հին հայոց մէջ, Վենետիկ, 1910, էջ 284-286:

4 Տե՛ս Էջմիածնի Աւետարանը, գրեց Յովսէփ Ստրժիգովսկի, թարգմանեց հ. Բառնաբաս վ. Պիլէզիկեանը, Վիեննա, 1896, էջ 6-8:

5 Նույնը, էջ 8:

6 Բաբկեն Առաքելյան, նշված աշխատ., էջ 42: Հմմտ,՝ Լևոն Ազարյան, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Եր., 1975, էջ 40:

7 Տե՛ս մեր աշխատությունը՝ Հայկական զինանշաններ, Եր., 1994, էջ 37:

8 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 132:

9 Ստ. Մնացականյան, Տեկորի տաճարի կտիտորական բարձրաքանդակը, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4, էջ 211-213:

10 Նույնը, էջ 215-216:

11 Սուրեն Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Եր., 1982, էջ 154, նկար 24:

12 Տե՛ս Հայկական մանրանկարչություն: Հովհաննես Սանդղկավանեցի: Կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Տատյանա Իզմայլովան, Եր., 1986, նկար 30:

13 Ալեքսանդր Սահինյան, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Եր., 1955, էջ 276: